

«Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

«Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագիրը նպատակաուղղված է ժամանակակից աշխատանքային շուկայում նոր հմտություններով և կարողություններով այնպիսի մասնագետների պատրաստմանը, որոնք կունենան բարձր պահանջարկ նաև այն պարզ պատճառով, որ իրենց մասնագիտական նկարագիրը կներառի ինչպես կառավարչական ժամանակակից հատկանիշներ, այնպես էլ՝ արդյունաբերական ոլորտի առանձնահատկություններին գերազանց լավատեղյակ տեղեկատվական և մասնագիտական հենք:

Մագիստրոսական կրթական ծրագրի իրականացման արդյունքում մագիստրոսը կտիրապետի ինչպես բիզնես, այնպես էլ պետական համապատասխան ոլորտներում կառավարչի նկատմամբ առկա պահանջներին:

Շրջանավարտներին շնորհվում է **«Կառավարման մագիստրոս»** որակավորում:

Մագիստրոսական ծրագիրը մշակվել է ինչպես ոլորտի, այնպես էլ գիտական շրջանակների լավագույն մասնագետների կողմից:

Ուսման վճարը մեկ տարվա համար 700.000 ՀՀ դրամ է, ամբողջ ծրագրի տևողության արժեքը՝ 1 մլն. 50 հազ. ՀՀ դրամ է:

Մասնագիտության նկարագիրը

Մագիստրոսական ծրագրի ավարտին շրջանավարտները տիրապետում են արդյունաբերական ոլորտում բիզնեսի կազմակերպման և կառավարման ժամանակակից գործիքներին, բիզնեսի վարման առանձնահատկություններին, սպառողների և մատակարարների հետ իրավապայմանագրային հարաբերությունների կազմակերպման արդի պահանջներին, և այլն:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը արդյունաբերության ոլորտը հռչակել է որպես գերակա: Ուստի այս ոլորտում է, որ սպասվում են մեծածավալ ներդրումներ, նաև՝ նոր աշխատատեղերի ձևավորում: Դրանք են բարձր տեղեկատվական տեխնոլոգիաների, ռազմաարդյունաբերության, տեքստիլ և լեռնահանքային արդյունաբերության, ճշգրիտ ինժեներիայի և այլ ենթաճյուղեր: Հատկապես այս ոլորտի ընկերություններում են, որ այժմ և առաջիկայում արդեն կա բարձրորակ կառավարիչ կադրերի մեծ պահանջարկ:

Ծրագրի շրջանակներում մանրամասն ուսումնասիրվելու են ինչպես օրենսդրության, այնպես էլ վարչարարության հարցերը մեր հանրապետությունում:

Ծրագրում ներառվում են արդյունաբերական քաղաքականություն, բիզնեսի կազմակերպում, մարքեթինգ, ձեռնարկատիրության կազմակերպում, ֆինանսական կառավարում և այլ ժամանակակից գիտակարգեր:

Կարևորն այն է, որ ծրագրի շրջանակներում Դուք մշտապես հանդիպելու եք մեր հանրապետության լավագույն և Ձեզ ծանոթ պետական և տնտեսական գործիչների հետ: Դասախոսելու են պետական կառավարման համակարգի բարձրագույն պաշտոնյաներ, արդյունաբերական ոլորտի ընկերությունների տնօրեններ, փորձառու մասնագետներ:

Աշխատանքի հնարավորություններ

Կրթական ծրագիրը պատրաստվել է արդյունաբերական բիզնեսի կազմակերպման և կառավարման ոլորտում մասնագիտական չափանիշներին համապատասխան՝ հաշվի առնելով արևմտյան բուհերի փորձը և նպատակաուղղված է մասնագետների պատրաստմանը, որոնց պահանջարկը հայկական տնտեսության մեջ ամեն տարի աճում է: Տվյալ ծրագրի շրջանակում ոլորտի առաջատար կազմակերպությունների հետ նախատեսվում է սերտ համագործակցություն՝ ուսանողների փորձառության վայրի և հետագա աշխատանքի տեղավորման խնդիրների հարցում:

Շրջանավարտները ուսումնառությունից հետո կարող են աշխատել ինչպես տվյալ ոլորտում, այնպես էլ ժամանակակից տնտեսության այլ ոլորտներում, քանի

որ տիրապետելու են բիզնեսի կազմակերպման և կառավարման ժամանակակից մեթոդներին, նաև՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններին:

Այսօր հայտնի է, որ մեր հանրապետությունում որքան կարևորություն ունեն արդյունաբերության կառավարիչները, և առանց տնտեսության այս ճյուղերի արդյունավետ կենսագործունեության՝ անհնար է պատկերացնել մեր հանրապետության հանրային կյանքի բնականոն ընթացքը: Իսկ դա նշանակում է, որ վերոնշյալ ոլորտի ընկերություններում մշտապես լավագույն մասնագետների նկատմամբ լինելու է բարձր պահանջարկ՝ համապատասխան բարձր աշխատավարձով:

Կրթական ծրագիրը ղեկավարելու է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Մելքումյանը: